1943 թվի սեպտեմբեր ամսին Մոսկվայում տեղի է ունեցել Ռուսաց եկեղեցու եպիսկոպոսների ընդհանուր ժողով, որտեղ պատրիարք է ընտրվել ամենապատիվ Սերգիյ արքեպիսկոպոսը: Պատրիարքի ընտրության կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տ. Տեղակալը հետևյալ հեռագիրն է ուղարկել նորընտիր պատրիարքին:—

ՄՈՍԿՎԱ, ՌՈՒՍԱՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՍԵՐԳԻՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսության ի սրտե ողջունում ենք Ձեր՝ Ամենայն Ռուսաց ուղղափառ եկեղեցու պատրիարքական գահ բարձրը:

Մաղթում ենք Ամենաբարձրյալին, որ Նա հովանավորի ուղղափառ եկեղեցին և ռուս մեծ ժողովուրդը:

Ի հեռևումն Երուսաղեմից մեր ըստացած հեռագրի՝ հաճեցեք ընդունել նաև Երուսաղեմի հայ պատրիարքի՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի շնորհավորանքները և բարի իղձերն ու բարեմաղթությունները:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍ-
ԿՈՊՈՍ ՉԵՈՐԵՔՋՅԱՆ

Նորընտիր պատրիարքից ստացված է հետևյալ պատասխան-հեռագիրը:

ԷՋՄԻԱԾԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՈՐԵՔՋՅԱՆԻՆ

Ընդունեցեք խորին շնորհակալությունը պատրիարք ընտրվելու առթիվ Ձեր ողջույնի և Ռուսաց ուղղափառ եկեղեցու և ժողովրդի նկատմամբ արտահայտած Ձեր բարեմաղթությունների առթիվ:

Շնորհակալությունս հաղորդեցեք Երուսաղեմի Հայ պատրիարքին: Թող ապրի և բարգավաճի հայ ժողովուրդը:

ՍԵՐԳԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ